ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 919-Ա « 11 » մարտի 2024 թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 13-Ի Հ.68-Ա ՈՐՈՇՄԱՆ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ, Հ.ԱՐՂՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.8/6, Ս.ՄԱԼԽԱՍՅԱՆՑ ՓՈՂՈՑԻ Հ.25 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել «ԱՐՄ ԿՈՆՍՏՐԱԿՏ» ՍՊԸ-ի լ/ա Արամ Ավագյանի դիմումը՝ Հ.Արղության փողոցի հ.8/6, Ս.Մալխասյանց փողոցի հ.25 հասցեներում գտնվող, ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունները փոխելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 12.01.2023թ. հ.12012023-01-0143, 05.01.2023թ. հ.05012023-01-0253 /գաղտնաբառ՝ DZITC2JA78XG, J6AWWRFDAABA/ վկայականները, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի 03.08.2021թ. հ.ՄՇ/23505, 30.11.2021թ. հ.ՄՇ/137260, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 05.08.2021թ. հ.ԴԳ-4108, 01.12.2021թ. հ.ԴԳ-6439, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի Երևանի գազաֆիկացման և գազամատակարարման մասնաճյուղի 04.08.202122-13/2380, 21.12.2021թ. հ.22-13/3302 գրությունները:

Հ.Արղության փողոցի հ.8/1 հասցեում գտնվող 0.05943հա մակերեսով հողամասը սեփականության իրավունքով պատկանում է «ԱՐՄ ԿՈՆՍՏՐԱԿՏ» ՍՊԸ-ին, որը ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 15-ի հ.2330-Ն որոշմամբ հաստատված Երևանի գլխավոր հատակագծով գտնվում է բնակելի նպատակային նշանակության, ցածրահարկ բնակելի կառուցապատման գոտում, իսկ Հ.Արղության փողոցի հ.8/6, Ս.Մալխասյանց փողոցի հ.25 հասցեներում գտնվող հողամասերը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, արդյունաբերական օբյեկտների կառուցապատման գոտում:

Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի փետրվարի 13-ի հ.68-Ա որոշմամբ Արաբկիր վարչական շրջանի, Հ.Արղության փողոցի հ.8/6 և Ս.Մալխասյանց փողոցի հ.25 հասցեներում գտնվող, «ԱՐՄ ԿՈՆՍՏՐԱԿՏ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող համապատասխանաբար՝ 0.189843հա և 0.36406հա մակերեսներով հողամասերի նպատակային նշանակություններն արդյունաբերության, ընդերքօգտա-գործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիայից փոխադրվել են «բնակավայրերի» հողերի կատեգորիա:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով, 7-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի հ.1920-Ն որոշմամբ, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 01.02.2022թ. հ.18-06/2-5935 եզրակացությունը.

1.Հ.Արղության փողոցի հ.8/6 և Ս.Մալխասյանց փողոցի հ.25 հասցեներում գտնվող, «ԱՐՄ ԿՈՆՍՏՐԱԿՏ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող համապատասխանաբար՝ 0.189843հա և 0.36406հա մակերեսներով հողամասերի նպատակային նշանակությունները, Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի փետրվարի 13-ի հ.68-Ա որոշման համապատասխան, սահմանել բնակավայրերի, իսկ գործառնական նշանակությունները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի հ.1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ բնակելի կառուցապատման:

2.Հողամասերի նկատմամբ փոփոխված նպատակային և գործառնական նշանակություններով իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեում՝ համաձայն կից ներկայացվող նախագծման թույլտվության /ճարտարապետա-հատակագծային առաջադրանքի/:

3.Ընդունել ի գիտություն, որ.

1) «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի «ա» ենթակետի նախատեսվող գործունեությունը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության.

2) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 14.09.2022թ. հ.03/25.2/2765-2022 գրության համաձայն քննարկվող հողամասերին հարակից, Արղության փողոցով անցնում է վերգետնյա գազատար, ինչպես նաև Արղության փողոցի հ.հ.8, 8/1, 8/2 առանձնատների գազակարգավորիչները տեղադրված են տվյալ տարածքի արտաքին պատի վրա, ուստի կառուցապատման աշխատանքներ իրականացնելիս անհրաժեշտ է պահպանել ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 16-ի հ.787-Ն որոշմամբ հաստատված «Գազի տնտեսությունում գազատարների և դրանց վրա գտնվող ինժեներական կառույցների անվտանգության գոտիների չափերի ու դրանց օգտագործման» կարգի պահանջները՝ ապահովելով պայմաններ մատակարարի կողմից նշված գազատարների պատշաճ շահագործումը և սպասարկումը ՀՀ գործող տեխնիկական կանոնակարգերի համաձայն իրականացնելու համար.

3) քննարկվող տարածքում առկա են «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ին պատկանող կոմունիկացիաներ՝ ինչի պարագայում շինարարական աշխատանքների կատարման ժամանակ ընկերության աշխատակցի ներկայությունը պարտադիր է, քանի որ արգելվում է կատարել հողային աշխատանքներ՝ առանց կոմունիկացիաների տեղափոխման.

4) քննարկվող տարածքով անցնում են «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հաշվեկշռում գտնվող մալուխային գծեր, որոնց տեղափոխումն անհրաժեշտ է իրականացնել պահպանելով անվտանգության գոտիները, համաձայն լիցենզավորված ընկերության կողմից կազմված նախագծի՝ նախապես համաձայնեցնելով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի տեխնիկական տնօրենի հետ:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման, ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունների պետերի վրա:

6. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ